Մի՞թե ԴԱՐՁՅԱԼ ՓԱԿՈՒՂԻ...

Մեր թղթակցի հարցերին պատասխանում է ԼՂՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լեւոն Մելիք-Շահնազարյանը

- Անցնող հունիս ամիսը ինչո՞վ էր առանձնահատուկ Արցախի համար:

- Վերջին երեք տարիների ընթացքում այն, թերեւս, միակ ամիսն էր, որ անցավ առանց պատերազմի. ռումբեր չէին պայթում, չէին զոհվում մեր երիտասարդները: Այս հանգամանքը, բնականաբար, իր բարերար ազդեցությունը թողեց հանրապետության բնակչության կյանքի վրա՝ թե՛ տնտեսական, թե՛ հոգեբան: Մեր ժողովուրդը ի վերջո զգաց, որ պատերազմը հավերժական չէ, որ մի օր էլ կարող է ավարտվել:

- Ձեզ չի՞ թվում, արդյոք, որ այս տեւական հրադադարը կարող է ավարտվել նոր հրետակոծությամբ...

- Ես գտնում եմ, որ այս հրադադարը նույնպես ժամանակավոր է, եւ, ուզենք-չուզենք, պատերազմը կշարունակվի: Ու մենք պետք է պատրաստ լինենք պաշտպանելու մեր դիրքերը՝ ռազմական ու քաղաքական:

Հայտնի է, որ Ադրբեջանի Հանրապետությունը գտնվում է խոր ճգնաժամի մեջ: Իրեն զգացնել է տալիս ընդդիմությունը, որը կտրականապես դեմ է ցանկացած զինադադարի: Իմ խորին համոզմամբ, Ադրբեջանի նախագահ Հ. Ալիեւն ու ընդդիմությունը վաղուց լեզու են գտել միմյանց հետ, եւ վերջինս իր քայլերն անում է նախագահի բերադրանքով, որն էլ, իր հերթին, կատարում է Թուրքիայի եւ մյուս շահագրգիռ պետությունների կամքը: Իսկ երբ բանը հասնում է Ռուսաստանի միջնորդությանը, Ալիեւը փորձում է չմիանալ նրա խաղաղարար ծրագրին՝ իբրեւ խանգարիչ ուժ վկայակոչելով ընդդիմությունը:

Ըստ Ադրբեջանի քաղաքական ուժերի՝ երկիրը չի կարող ղեկավարել նա, ով, իրենց իսկ ասելով, ահագին տարածքներ է կորցրել, իսկ Ալիեւը այն անձնավորությունը չէ, որ հաշտվի իր աթոռից հրաժարվելու մտքի հետ: Ահա թե ինչու Ադրբեջանը նորից ու նորից կփորձի իր վերահսկողությունը հաստատել ոչ միայն կորցրած տարածքների, այլեւ՝ ամբողջ Ղարաբաղի վրա: Եվ, ամենակարեւորը, Ադրբեջանն այսօր Արցախի դեմ պատերազմում է՝ փորձելով իր բնակչության համար կյանքի տարածք ստեղծել: Իսկ պատմությունից հայտնի է, որ նման պատերազմներն անհամեմատ դաժան ու ծեւական են լինում: Ադրբեջանի բնական եւ քաղաքական շահերը (չհաշված կողմնակի ուժերը) բավական են, որ պատերազմը շարունակվի:

- Ստացվում է, որ ԵԱՀԽ-ի եւ Ռուսաստանի Դաշնության միջնորդական ջանքերը դարձյալ փակուղի են մտել:

- ԵԱՀԽ-ի հաշվով այս փակուղին անսպասելի չէր, բայց այն Ռուսաստանի համար ժամանակավոր բնույթ է կրում: Ամեն անգամ, նման դեպքերում, Ռուսաստանը հնարավորություն է գտնում արգելապատնեշը քանդելու: Այս անգամ էլ այդպես կվարվի: Եվ զուցե պատերազմը շարունակե՞լն է հերթական արգելապատնեշը փլեղու անհրաժեշտ միջոցը:

- Այսինքն, ամեն ինչ կախված կլինի այն բանից, թե ինչպիսի՞ վախճան կունենա պատերազմական գործողությունների հետագա փուլը:

- Եթե մեզ հաջողվի պաշտպանել մեր դիրքերը, ինչպես նաեւ ոչնչացնել թշնամու կրակակետերն ու խոշոր կորուստներ պատճառել նրա բանակին, կարծում եմ, Ադրբեջանին այլ բան չի մնա անելու, քան նստել բանակցությունների սեղանի շուրջ: Ասենք, մինչ այդ էլ նա նստել է այդ սեղանի շուրջ, բայց առայժմ պատրաստ չէ լուրջ փոխզիջումների: Հիմա, կարելի է ասել, բանակցությունները որոշակիորեն նահանջ են ապրել Ադրբեջանի քաղաքականության մեջ:

- Ըստ Ձեզ, ինչպիսի՞ կարգավիճակ կստանա լեռնային Ղարաբաղը:

- Ճիշտն ասած, այդ հարցը շատերն են տալիս, անգամ՝ պաշտոնատար անձինք, եւ այն միշտ էլ ինձ զարմացնում է: Արցախի կարգավիճակն արդեն տվել է ինքը՝ նրա ժողովուրդը, 1991 թ. սեպտեմբերին հռչակելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: ԼՂՀ-ն անկախ հանրապետություն է, ինքնիշխան պետություն: Եվ մենք մեր դիվանագիտությամբ, մեր բանակով պետք է հաստատենք այդ անկախությունն ու ինքնուրույնությունը:

ԼՂՀ-ն անկախ պետություն է, ըստ իս, այդպիսին էլ կմնա երկար տարիներ:

Իմ անձնական կարծիքն ու եզրաշխիքն է՝ Արցախը տեսնել մայր Հայաստանի գրկում, Հայաստանի Հանրապետության կազմում: